9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ ԸՍՏ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ ՓՈՐՁԱՐԿՎՈՂ ՆՈՐ ՉԱՓՈՐՈՇԻՉԻ ԵՎ ԾՐԱԳՐԵՐԻ

«Աշխարհագրություն» առարկայի 9-րդ դասարանի ավարտական քննության համար որպես հիմք և սկզբնաղբյուր է ընդունվում ուսումնական նոր չափորոշիչը՝ *ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023թ մարտի 30-ի N24- Ն հրաման,* «Հանրակրթական ուսումնական հաստատություններում **«Աշխարհագրություն»** առարկայի 7-8-րդ, 10-12-րդ և **«Հայաստանի աշխարհագրություն»** առարկայի 9-րդ դասարանների առարկայական չափորոշիչը»:

1. «Աշխարհագրություն» առարկայի ավարտական քննական թեստում առաջադրանքներն ընտրվում են համաձայն հանրակրթական դպրոցի «Աշխարհագրություն» առարկայի ուսումնական նոր չափորոշիչի և ծրագրերի, որոնք կազմվել են ըստ հետևյալ հիմնական գաղափարների՝

1) Երկրագունդ. պտույտներ, ոլորտներ.
   ա) Երկրի պտույտներն ու դրանց աշխարհագրական հետևանքները,
   բ) Քարոլորտ. կազմը, կառուցվածքը, դրանում ընթացող գործընթացները, և դրա պահպանությունը,
   գ) Ջրոլորտ. կազմը, դրանում ընթացող գործընթացները և դրա պահպանությունը,
   դ) Մթնոլորտ. կազմը, կառուցվածքը, դրանում ընթացող գործընթացները, և դրա պահպանությունը,
   ե) Կենսոլորտ. էկոհամակարգեր, դրանց պահպանությունը:
2) Տարածական մոդելավորում և տվյալներ.
   ա) Քարտեզ և հատակագիծ, աշխարհագրական դիրք,
   բ) Աշխարհագրական տեղեկատվական համակարգ (ԱՏՀ): Տեղորոշում:

2. Թեստի կառուցվածքը

Թեստը ներառում է 32 առաջադրանք (35 միավոր):

1-ից 22-րդը ընտրովի պատասխանով առաջադրանքներ են, *որոնցում ընդգրկված են «Աշխարհագրություն» առարկայական ծրագրի գրեթե բոլոր թեմաները* ***և գործնական աշխատանքները:***

23-ից 34-րդը կարճ պատասխանով առաջադրանքներ են, որոնք ընդգրկում են հիմնական դպրոցի «Աշխարհագրություն» առարկայական ծրագրի գրեթե բոլոր թեմաները և գործնական աշխատանքները, ըստ նոր ծրագրերի և չափորոշիչների:
Դրանց պատասխանները կարող են լինել թվեր, բառեր և բառակապակցություններ, սահմանումներ կամ մեկնաբանություններ:

35-րդը ընդարձակ պատասխանով առաջադրանք է:
Այս առաջադրանքը կատարելու համար պետք է մանրամասն ու հիմնավորված ներկայացնել հարցի պատասխանը:
Ընդարձակ պատասխանով առաջադրանքի հիմնավորումները մանրամասնորեն պետք է գրել առաջադրանքից հետո բաց թողնված հատվածում:

Ձևաթղթում տրված է սխալ նշված պատասխանն ուղղելու 4 հնարավորություն, որից 2-ը՝ ընտրովի, 2-ը՝ կարճ պատասխանով առաջադրանքների համար:

3. Միավորների բաշխումը

Ըստ առաջադրանքների տիպերի միավորները բաշխվում են հետևյալ կերպ.

1. ընտրովի պատասխանով առաջադրանքներ՝ 22 միավոր
2. կարճ պատասխանով առաջադրանքներ՝ 12 միավոր
3. ընդարձակ պատասխանով առաջադրանք՝ 1 միավոր

4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

Քննության տևողությունը 120 րոպե է:
Թեստ-գրքույկի դատարկ մասերը օգտագործվում են սևագրության համար: